

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Օտարաբարբարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Меск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Վ.Ի.Ա.ԿԱՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԿՆ Հայոց վրաստանի և ինքնիշխան հանրեք դասու հոգևորականաց Տիֆլիսոյ ցաւօք սրտի ծանուցանելով բարեպաշտ ժողովրդականաց քաղաքիս զփութունն յատեալս գերապատիւ ՍԱՐԳՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍԻ ՀԱՍՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ հրակիթ գնտա 'ի հանդէս յուղարկաւորութեան հանգուցելուն 'ի տանէ բժշկական Լիսեյանցի 'ի մայր եկեղեցին Վանոց 'ի 20-ն ամսոյ յաւուր ՇԱՐԱԹՈՒ յ3 ժամու յետ միջօրէին: Իսկ կարգն օժման և թաղման կատարելոց յաւուր ԿԻՒՐԱԿԻԻ 'ի 21 ամսոյ 'ի 10-ն ժամու առաւօտու:

ՌՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Ս. Մ. Սոյոյիկի Նամակ Մեղրից: Նամակ Սուրբաբոյ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: «Մարտի» յոլուածը: Նամակ Թիֆլիսայից: «Մշակ» նշանակումներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բան ասիական: Չեռնաբերութիւնների ձևեր և առեւտրական ընկերութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԳԷՅ ՄԻՒՍՅԻԼՈՎԻՉ ՍՈՒՍԼՈՎԵՎ

Ներկայ ամին 4-ին Ռուսաստանը զրկվեց իր երեւելի գիտնականների մէկից և իր պատմական գիտութեան պարագլխից, իսկ Սոսլիսի համալսարանը իր ամենաջերմ պաշտպանից և արդիւնաւոր դործիչից: Ամբողջ ուսուցչական աշխատանքը ուղղում է Սոյոյիկի մահը ոչ թէ միայն իբրև գիտնականի, այլ և իբրև ազնիւ, անկեղծ հասարակական դործիչի, իբրև մի այնպիսի անձի, որի իղէաների և հայեցողածքների շնորհիւ վրա դաստիարակվել և դաստիարակվում է ժամանակակից ուսուցչական, ուսուցչական և Սոյոյիկի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԵՆՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԵՆԵՐ
ՆԻ
ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աստուղ մենք կարող ենք արդէն բաց և կամ ընդհանուր ընկերութեան սկզբունքները նշանել, թէպէտ և այն ժամանակներում նրանց այդ անունները չէին տալիս: Խօսք չը կայ, այդ ընկերութիւնները կարող էին կազմել նախ միայն այնպիսի մարդիկ, որոնք իրար լաւ ճանաչում և իրար լիովին հաւատ կարող էին ընծայել: Բոլոր մասնակիցները ծառայում էին մի ընկերութեան, մի նպատակի: այդպիսի ներքին կապ պակաս էր հասանելի ընկերութիւններին և այդ է պատճառը, որ դա, մի նոր սկզբունք լինելով, վաճառականութեան և առեւտրական ընկերութիւնների համար մի նոր դար պիտի բացէր:

Գործնական կեանքը արդեւ օրէնսդրութեան

վիկի մահը ընդհանուր հասարակական նշանակութիւն ունենալով, ամապարում եմ ծանօթացնել մեր հայ հասարակութիւնը նրա անձնաւորութեան հետ և ցոյց տալ այն մեծ նշանակութիւնը, որ նա, իբրև պատմաբան և հասարակական գործիչ, ունի ամբողջ ուսուցչական մէջ: Բայց առաջ մի քանի համառոտ կենսագրական տեղեկութիւններ հաղորդելը անօգուտ չեմ համարում:

Սերգէյ Միսայիլիչ Սոյոյիկի ծնվել է 1820 թ. Սոսլիսիում հոգևորական ծնողից: Նրա կենսը հարուստ չէ արտաքին զիջումներով, ինչպէս այդ պատահում է մտքի և տաղանդի տեր մարդկանց հետ: Իր սկզբնական ուսումը սկսելով և աւարտելով Սոսլիսի 1 կլասիկական դիմնադիմումում, նա 1839-ին մտնում է այդ քաղաքի համալսարանի լեզուագիտութեան պատմական ֆակուլտետ: Այդտեղ միջոցառումները յետոյ, նա երկու տարի պարապում է արտասահմանում պատմական գիտութիւններով, առ որ նա մանկութիւնից մի առանձին սէր էր ցոյց տալիս: զբանից յետոյ այն ժամանակակից ուսումնական շրջանի հոգաբարձու Ստրոգանով իշխանի առաջարկութեամբ պատմական կաթնէրայի պրոֆեսոր է ընտրվում և ամբողջ 30 տարի յարատւելով այդ գործունէութեան մէջ, անդադար օգնական հանդիսանալով համալսարանին, ազնուութեամբ, բարեխնդրութեամբ կատարելով իր պաշտօնը, մեռնում է 60 տարեկան հասակում, ի մեծ սուգ լուսաւորութեան և կրթութեան անկեղծ բարեկամների:

Բացարձակ Սոյոյիկի բարձր նշանակութիւնը ուսուցչական պատմական կեանքի մէջ ցոյց տալով այն վեհ և ազնիւ գաղափարները, որոնց արդեւորութեան ցակ նա գործում էր և որոնց նա ոչ մի րուպէ չը դաւանանք, նոյն իսկ այն ժամանակ, երբ ամենարի հոգիներն անգամ յուսահատվում և ընկճվում էին, յայտնվելով սոցիալիստական և խաւարի կողմից յառաջացած պատերազմից, վերջապէս նկարագրելով այն նոր և թարմ ուղղութիւնը,

որ նա մոյրեց ուսուցչական պատմութեան մէջ, մի ուղղութիւն, որին այսօր հետևորդ են Ռուսաստանի գիտնական աշխարհի ներկայացուցիչները, ևս դրանով բացատրած կը լինեմ և Սոսլիսի ինտելիգենցիայի գաղափարները, հայեցողածքները և ուղղութիւնը, որովհետև այդ ինտելիգենցիայի համարեա բոլոր ներկայացուցիչները անուանի պրոֆեսորի աշակերտները և հետևողներն են:

Պէտք է սասած որ գիտութեան մէջ պատմութեան վերաբերմամբ երկու իրար հակառակ ուղղութիւն է տիրում: Այդ երկու հակառակ բանախնդրի ներկայացուցիչները Ռուսաստանում Կարամզին և Սոյոյիկն էին: Մինչդեռ առաջինը իր «Исторія государства Россійскаго» երկատրութիւնով շարժել և զարմացրել էր ամբողջ ուսուցչական, ահա դուրս է գալիս մի նոր պատմաբան, որ առաջին իսկ անդամից տարբար էր դարձնել մտածողների ուղղութիւնը իր վրա և բացատրում է իր նախորդի սխալ ուղղութիւնը: Կարամզին անցնելով զարում և քաղաքական գրականութեան մէջ տիրապետող ուղղութեան հետևորդ էր: նա շքեղաբան պատմագիր էր, նա միայն նկարագրում էր ամբողջ պատմական կեանքի ընթացքում պատահած կարևոր զիջումները զեղեցիկ, պայծառ գոյններով, այնպէս որ նրա գրչի տակից դուրս էր գալիս մի մեծապանակ, շքեղ պատկեր, որից պատկերահար կամ նկարիչը մի հիանալի նկար կարող էր պատրաստել: Կարամզին յառաջ էր գալիս այն հակապատմական ուղղութիւնը, որ ազգի պատմական կեանքի մէջ երևեցած երեւոյթները լոկ պատահական էին և էին ստանում, կամ թէ բացարձակ էին իբրև անձնաւորութիւնների քաջութեան, խոհմութեան հետևանք, այնպէս որ հետագուր այդ անձնաւորութիւնը և երեւոյթը կը չքանայ: Անձնաւորութիւնները առաջնակարգ դեր են խաղում Կարամզինի պատմութեան մէջ, իսկ իրողութիւնները, փաստերը, միայն երկրորդական տեղ են բռնում: Պատմա-

թեան մէջ տիրապետող այդ կրանակը գիտնական նշանակութեան արժէք չունի, նա միայն տիրապետում է այն ազգերի գրականութեան մէջ, որն զուրկ է կրթիկայից, որի մէջ քննադատական հայեացքները դեռ շատ ստոր տեղ են բռնում: Այդ ֆալսիւր ամենից լաւ նկատել կարելի է այժմ մեր հայ գրականութեան մէջ: պատմութիւնը մեր մէջ, դեռ չը ստանալով գիտնական աւարկայի նշանակութիւն, դարձել է ոչ թէ ամբողջ հայ ազգի, նրա ներքին կեանքի, պրոգրեսի պատմութիւն, այլ Հայկերի, Արամների, Տրդատների կեանքի և գործերի նկարագրութիւն, ինչպէս ուսուցչական պատմութիւնը Կարամզինի գրչի տակից դուրս էր եկել Իվանների, Կիկիաբների, Բորիսների պատմութիւն: Բայց այսպէս չէ և քաղաքական գիտութեան պահանջը պատմութեան վերաբերութեամբ: նա պահանջում է, որ պատմութիւնը լինի մի ազգի ներքին կեանքի, նրա զարգացման, յառաջդիմութեան և յետադիմութեան ճշգրիտ հայելին: նա մի յայտնի պատմական զիջում նկատում է իբրև առաջնութեան զիջում ի հետևանք, իսկ կեանքի մէջ երևեցած գնառական երեւոյթների պատճառը նա որոնում է ոչ թէ անձնաւորութիւնների կամ թագաւորների բռնաւորութեան մէջ, այլ իբրև իրեն ազգի ներքին կեանքի հասանքից յառաջ եկած մի պահանջ, այնպէս որ խոր կերպով մտնելով այդ կեանքի մէջ, դուրս կը տեսնէք, որ այդ երեւոյթը անպատճառ պէտք է յայտնվէր այդ կեանքի մէջ և այլպէս լինել նա կարող չէր: անձնաւորութիւնները այդտեղ ոչ ինչ նշանակութիւն չունեն, նրանք միայն օրէնքի գործարկին են հանդիսանում: Այդ ուղղութիւնը ցոյց է տալիս որ ազգերը իրենց զարգացման կողմից կեանքից կամ յայտնի բնապատմական օրէնքներին, որ նրանք անցնում են զանազան ֆալսիստիկ, միջև մի որոշ լուսաւորութեան են հասնում և թէ միշտ պարզ երեւոյթներին յաջորդում են աւելի բարդաբաղ երեւոյթներ: Այդ ուղղութեան ծնվելուն և զարգանալուն նպատակին Կարամզինի, Բոսլիկ և

Բաժանորդական ընկերութեան գաղափարը ամենից առաջ ծնեց Կապիտալիստ, որը, ինչպէս յայտնի է, Կապիտալի կրկնածնական օրոքոյն է և որը ամենից ծաղկեալ երկիրն էր միջին դարերի վերջերքին և նոր դարերի սկզբներին: Բայց այն երկիրը, որը առաջին անգամ բուն բաժանորդական ընկերութիւն հաստատեց, Հոլանդիան էր, ուր 1602 թ.ին բացվեցաւ հոլանդա-նորվալան առեւտրական ընկերութիւնը: Հոլանդիան, բողոքականութեան սկզբնական նկարագրով կապ էր կաթովի երկիրներում ընդունված վախառութեան օրէնքներից: Առեւտրը պահանջում էր կապիտալի միաւորութիւն և մասնաւոր մի առեւտրի համար հեռու երկիրների հետ, սրպէս է Հոլանդիանը: Այդպիսի համառոտութիւնները օտար երկրների հետ կարող էին չարն ոչ թէ միայն առանձին ձեռնարկուններին, այլ և տերութեանը, տարածելով սրա դուրսը հեռու իր սահմաններից: զարմանալի չէ ուրեմն, որ հոլանդական կապիտալիստները, նրա պատճառ էր իր կարողութեան չափ, այդպիսի հաստատութիւններին Այդ ընկերութիւնը նրանցից մէկն է, որը ամենից զօրեղ և ամենից յաջողակ կերպով շարունակել է իր գործը և որը վաճառականութեան պատմութեան մէջ անուս անուս է թողած: Յրանսիական մեծ յեղափոխութիւնը (1789 թ.) մահու հարուած տուեց նրան և ընկերութիւնը քանդվեցաւ ապրիլով մօտ երկու դար:

(Կը չարունակվի)

Կրէպէրի թէօրհաները: Նա արտայայտուած է մի խօսքով—պարզամտիկական ուղղութիւն: Օրինակ, մինչդեռ Հայ պատմագիրը Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածումը Արգար թագաւորի անձնական կամքով և բընաւորութեամբ է բացատրուում, Հայ պարզամտիկ պատմաբանը այդ իրողութիւնը կը բացատրէր նրանով, որ Հիթանոսական կրօնը էլ անկարող էր բաւարարութիւն տալ ազգի կրօնական պահանջներին և մտաւոր գարգացման: Ահա Սօլովիեփի բուն փառքը և նրա Հոյակապ բազմահատոր երկատրութեան («Исторія Россіи» գիրքը) գերազանցութիւնը այդ ուղղութեան մէջ է կայանում: Այն իրէականը և Հայեցումաճընները, որոնք նա արտայայտուած է իր այդ 29 հատոր պատմութեան մէջ, այն եղանակը և մեթօդը, որով նա բացատրուած է ուսու ազգի պատմական կեանքի ընթացքը, մի սարսափելի յեղափոխութիւն յառաջարկող ոչ թէ միայն կըրթութեան, այլ և գրականութեան մէջ, այո, ժամանակակից սերունդը, Սօլովիեփի շնորհով, նախկին սերունդի Կարամզինի Հայեցումաճընների և գաղափարների հիման վրա ստացած կրթութեան մի բոլորովն հակառակ կրթութիւն ստացաւ. նա ծանօթացաւ նախ և առաջ ինքնաձանաչութեան հետ, սովորեց կրիտիկական աչքով նայել իր կեանքի վրա, շօշափեց այն պայմանները, որոնք պատճառ էին եղել իր պատմական կեանքի մէջ այս ինչ կամ այն ինչ երեւոյթի յառաջանալուն և մինչդեռ Հին սերունդը իր Հայրենիքի մօտ գոյական լուծից ազատվելու բոլոր փառքը Կիմօրի Կոնստանտին քաջութեան էր վերագրուում, նոր, Սօլովիեփի գաղափարներով սնված և համակված սերունդը այդ իրողութեան ընդհանուր տիեզերական նշանակութիւն էր տալիս. եւրօպական գաղափարների, լուսաւորութեան հետ շփվելը, հարգողականցիւն էր պատճառ, որ մօտորական լուծը ընդ միշտ ջարջալովից: Հասկանալի է այժմ թէ ինչի Սօլովիեփի մասը ի տուգ համակից ամբողջ ուսու գիտնական աշխարհը. նա յեղափոխել էր իր ազգի կեանքը: Բայց միայն այդ հանգամանքն է նրան հօշակողը, թէ և մի ամբողջ սերունդ նոր գաղափարների հիման վրա պատրաստելը բաւական է մի մարդու անունը անմահացնելու ոչ, Սպարկիեփի, յայտնի է և իբրև Մօսկվայի համալսարանի ջերմ պաշտպանը և նրա լուսաւոր սիւներից մինը, մանաւանդ որ նա երկար ժամանակ այդ համալսարանի թէկտօրն էր: Բայց նրա այդ ստարկուած արած արդիւնաւոր ծառայութեան հետ աւելի լաւ ծանօթանալու համար, հարկաւոր եմ համարուած այժմեան թէկտօր Տիլտրափօլի նրա գերեզմանի վրա խօսած ձառեց նշանաւոր մի քանի կտորներ յառաջ բերել:

Մենք յանձնուած ենք, սասց թէկտօրը, այսօր հողին, մեր ուսուցչին, որ ամբողջ 30 տարի իր փառաւոր գիտնական գործունէութեամբ համալսարանի պարծանքը եղաւ: Ի դէմս Սօլովիեփի մեր համալսարանը կորցնուած է մի գործիչ, որ իր պատմութեան մէջ երևեցած երկու նշանաւոր դարեգլխի սկանառես է եղել—քառասնական թաւակներին վերջերի և 60-ական թաւակների սկզբի էպոսային, որ պէտք է մեր համալսարանների մէջ գիտնական և համալսարանական գործունէութիւն մշտնջեւեր. նա մեռաւ և թողեց իր Հայրենիքի լուսաւորութեան այդ վառարանները մի այնպիսի ժամանակ, երբ ճշմարիտ լուսաւորութեան բարեկամների սիրող լցված է տարակուսանքով և վախով սպազայի համար: Սերունդներ անցնում էին, գործողները հայեցումաճըր և ուղղութիւնը փոխվում էին, այն մարդիկ, որոնք ձեռք ձեռքի տուած ծառայում էին ընդհանուր գործի, միմեանց ամենատեստիկ թշնամի էին դառնում և իրարից հեռանում և զանազան բանակներին հետ միանում, բայց Սօլովիեփի դէպի համալսարանը ունեցած յարաբերութիւնները չէին փոխվում: Նա

ամբողջ իր կեանքում հաւատարիմ մնաց երկուստարդական այն իրեանքներին, որոնք նրա մէջ կազմվել էին քառասնական թաւակներին փառաւոր ժամանակում: Այստեղ ականջ յարութիւն է առնում իմ յիշողութեան մէջ 50-ական թաւակներին այն տիրալի ժամանակը, երբ մահը միմեանց ետեկց յալիշաակելով Գրանտիսի, Կուզրեւայցի, Բուլիէ պրօֆէսորներին, կարծես սպառնումէր համալսարանին նրա ամենալաւ ոյժերը, կենդանութիւնը ելելու: Այդ ժամանակ Սօլովիեփի կանչեց բոլորին միմեանց մէջը մէջքի տալ և շրջապատել այն դրօշակը, որ այդ օրհնակ հողիները անկել էին: Նկէք մենք էլ հաւատարիմ մնանք այդ պատուիրանին այս ժամին երբ համալսարանին վրանգ է սպառնում, երբ նրա վրա հարուածներ են թափվում, եկէք սերտ կերպով միանալք և համալսարանինք այն դրօշակի շուրջը, որ մեր անուանի դատարարները կանգնեցրել են, այն դրօշակի, որի վրա գրված է—«Յոյս, ճշմարտութիւն և բարութիւն»:

Այ սակաւ ուշադրութեան արժանի են և պատմութեան պրօֆէսոր Գէրիէի խօսքերը, որտեղից քաղում եմ հետեւեալը: «Այ դք Սօլովիեփի նման չէ ստեղծել ուսու ազգի այնպէս լիակատար, ամբողջ և ճշգրիտ պատկերը, իր պատմական գաղափարները մէջ: Նա, կարելի է ասել, իբրև հմուտ լողորդ, լող էր տալիս ուսու ազգի պատմական կեանքի ընդարձակ և հզօր հոսանքի վրա: Սերգէյ Միխայլովիչը իր արտի մէջ կրում էր մի խորին սեր դէպ ընդհանուր, մարդասէր լուսաւորութիւնը, որն կարելի է ձեռք բերել բազմակողմանի, հիմնաւոր և ազատ դիտութեան միջոցով»:

Սօլովիեփի մի նշանաւոր և անմահ գործն ևս այն էր, որ նա մինչև վերջին շունչը պատերազմում, մաքառում էր այն ձեռնարկութիւնների դէմ, որոնցով կամեւում էին ջնջել համալսարանի ինքնուրոյնութիւնը, ներքին անկախութիւնը: Այդ արնիւ պաշարը համալսարանի պատմութեան փառաւոր էջերից մին է կազմում:

Ահա մի այսպիսի անձնաւորութիւն է կորցնում Ռուսաստանը և ուսու ազգը չէր կարող առանձին կերպով չը յարգել նրա յիշատակը, ուստի նրա թաղումը, որ տեղի ունեցաւ ամսոյ 8-ին շատ հազաւազիւ տեսարան էր ներկայացնում: Առաւօտեան 8 ժամին հանգուցելու մարմինը խուռն բազմութեան ընթերակցութեամբ տարվեցաւ համալսարանի եկեղեցին: Պատարագ մատուցանող և մարմինը օծողը նոյն ինքն Մօսկվայի մեթոդայօլիան էր, հանգուցեալի նախկին ընկերակիցը: Մօսկվայի գլխաւոր նահանգապետը և մայրաքաղաքի բարձրատիճան ծառայողները եկել էին հոշակաւոր պատմաբանի աճիւնին վերջին յարգանքը մատուցանելու: Պրօֆէսորները և ուսանողները, Մօսկվայի ինտելլեկտուալի ներկայացուցիչները խուռն կերպով լցվել էին եկեղեցին: Պետերբուրգի համալսարանի և զիտութեանց Ակադէմիայի կողմից իբրև պատգամաւոր ներկայ էր Սուխոմլինով պրօֆէսորը: Ամբողջ զազաղը ծածկված էր համալսարանի ներքի, ուսանողութեան, զանազան գիտնական ընկերութիւնների կողմից ուղարկված ծաղկեայ պատկերով: Մինչև գերեզմանը հանգուցելու մարմինը ուսանողները տարան իրենց ուսերի վրա դրած:

Ահա այսպէս փառաւոր է լինում ճշմարիտ Հայրենասէր և մարդասէր անձի մահը: Այդպիսիներին համար է ասած. «Ելիշատակն արգարոց օրհնութեամբ եղիցի»:

Համբ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՄԵՂԻՆԻՑ

2 հոկտեմբերի

Տան և հինգ տարի առաջ մեր Մեղրի գիւղում ուսումնարան հիմնելու խնդիրը յարուցել-

ցաւ, բայց որովհետև նորա յարատեւութեան համար ոչինչ հողագործութիւն չէր եղել, մնաց կրտստ: Մեղրեցիք ուսումնարանի շինութիւնը բարիօնեան աշտարակաշինութեան վիճակի մէջ թողնելով, միշտ ունեցան երբեմն մէկ և երբեմն աւելի իրար հակակամութեան համար մի քանի առանձին տեղերում, ի թիւս որոց անցեալ 1878-ամի յունվարի մէկից ևս եւ բազմ ունեցայ ուսուցիչ նշանակվել և ես յանձնաւոր եղայ՝ միմիայն այն պայմանաւ որ նախակրթեմ մանուկները մայրենի և պետական լեզուներով, երբ և իցէ հիմնելու ուսումնարանին համար, յայտնելով, որ մանկավարժութիւնը բոլորովն իմ կարողութիւնից դուրս է: Արդէս մինչև իմ ուսուցիչ ընտրվելը, նոյնպէս և նորանից դէպը, ամենայն միմիայն մի քաղաքից մի ժողովում և վերջապէս ամենայն մի քաղաքից մի յարակրթեմանը, որ իրագործէ իր առաջվայ ձեռնարկը—ուսումնարանների եկամտաւորները չը խնայէ ընծայել: Այս խնդիրը կաղ ի կաղ տալով, վերջապէս պատիւ ունեցաւ մի քանիսներին ուշադրութիւնները դէպի իրան դարձնել, և ամսիս 10-ին վաղուց պատրաստած ստորագրութիւնը ներկայացրի մեր հասարակութեան նախկին ժողովատեղը—փողոցը, ուր ստորագրութեան բովանդակութիւնը երկարօրէն բացատրելէն զիտի, հասարակութեան մեծամասնութիւնը համակրեց, և մի և նոյն օրը հանգանակութիւնը սկսվեցաւ: Այն մշտական աղբիւրները, որ հասարակութիւնը սիրով ընդունեց ընծայել ուսումնարանին, նորա հաստատ մնալուն համար, հետեւեալներն են: Առաջինն է հասարակական 2500 ռուբլ, դրամագլխից ստացվող տարեկան 250 ռուբլ տոկոսիքը, երկրորդն է, հասարակական արօտատեղերից տարեկան առ նուազը գոյացող 150 ռուբլ եկամուտը. երրորդն է, հասարակական այս ու այն կողմում ամայի հողերը, որոց դնող կայ և վճարում է միանգամ 3000 ռուբլ, որից կը ստացվի տարեկան 300 ռուբլ տոկոսիք, չորրորդն է, մեր տանուտէրական կնիքի համար նշանակած հարկը, որ պիտի ստացվի օտարութիւն գնացողներին և պայմանագիր կայացողներին, որոց գումարը առ նուազը կը հասնի 50 ռուբլու. հինգերորդն է, շինական դատարանների և տանուտէրի վճիռներից գոյացած տարեկան տուգանքները, որոնք հասնում են 50 ռուբլու. վեցերորդն է տեղալի իւրաքանչիւր աշակերտից ստացած հինգ-հինգ ռուբլը, որի գումարը հասնում է 500 ռուբլու և եօթներորդն է, հանգանակութիւնից գոյացած դրամագլխի տոկոսիքը: Նոյն օրվայ 74 անձանց ընծայած փողի գումարը հաւատարկեցաւ 4600 ռուբլու, և կարելի է որ մինչև մի քանի շաբաթ վերջանայ և հաւաքուի էլի 1400 ռուբլ, որ ընդամենը լինի 6000 ռուբլ: Այս եօթն աղբիւրների եկամուտը կը հասնի տարեկան 1800 ռուբլու, որով կարելի է հողալ ուսուցիչներին ուսնիլը, մինչև որ ճշմարիտ և ազգասէր անձինքների ներգործութեամբ հասարակութիւնը ժամանակին համապատասխանող մի առաջադիւնութիւն կը շօշափի իրականացէս, այն ժամանակ յայտնի բան է ուսումնարանի գրութիւնը կատարելապէս կապահովացնի իր ոյժին համեմատ մի ակնանաւոր գումարով:

Ստորագրութեան միջի ծրագրած պայմանները ինն էին, որոնցից միայն վերագրեալները ընդունեցին, իսկ երկուսները բացառեցին, որոց առաջինն էր, գիւղում կախել հասարակական կշիռ և նորա հատկէն յանձնել ուսումնարանին, որին ուղղող կայ տարեկան 75 ռուբլով, իսկ երկրորդն էր հարկ դնել, նորաձիւնների, պատկերի, մեռնողների և անմահութիւնների համար և նորանցից գոյացած ևս յանձնել ուսումնարանին, որպիսին էլ կը հասնի 75 ռուբլու, ընդամենը 150 ռուբլ: Այսպիսի դէպքում չափազանց օգնող կարող են հանդիսանալ քահանայները ու տանուտէրը իրանց համարուածը, բայց մի քաղաքացի մեր երեք քահանայներից ոչ մէկը մի քաղաք չի կարողացել եկեղեցում կամ ուր և իցէ: Ահարօն քահանայ Տէր-Գաւթեանը մի տարուց աւելի է թափառուած է երբեմն այս և երբեմն այն հեռաւոր քաղաքում: Գէորգ-քահանայ Տէր-Գրիգորեանցը, որը նմանապէս գիւղումն չէ գտնվում, շատ անգամ, նա էլ «անուրը կայ» ամսուումը չը կայ: Միւսը, Պօղոս-քահանայ Տէր-Գրիգորեանցը, որ հաջիւ թէ այս տան և հինգ տարվայ միջոցումն այս անգամ միայն մասնակցեց այս հանգանակութեան և նախ ինքն ստորագրեց, իսկ մեր պ. տանուտէրը դեռ ևս չէ ստորագրել:

Մատթէոս Շահինեանց

ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՑ

16 հոկտեմբերի

«Մշակիկ» № 172 մէջ, ներքին լուրերում, հրատարակել էիք, որ իբր Վրաստանի մի քանի վրացիստ հայ գիւղերի ծխական դպրոցների վարչութիւնները մերժում են ընդունել վրացի երեխաներին նրանց դպրոցները, բայց, կարծես, բացառութիւն է կազմում միայն Սուրամի հայ ծխական ուսումնարանը, որտեղ այսօր ուսանում են ութ վրացի երեխաներ, որոնց, բացի ուրիշ առարկաներից, դաստրվում է և վրաց լեզուն, իբրև առարկաներից մինը:

Իսկ անցեալ տարի այստեղ վերջացրին ծխական դպրոցի ընթացքը երկու վրացի աշակերտներ, որոնք բացի իրանց մայրենի լեզուից բաւական մաքուր խօսում ու կարգում էին հայերէն: Այդ ութ վրացի աշակերտներից երկուսը բոլորովն ձրի են, իսկ վեցը վճարում են ամսական մի մի ռուբլի:

Կը ցանկանայինք որ միւս վրացիստ հայ գիւղերի ծխական դպրոցներին հետեւին Սուրամի օրինակին, քանի որ այդ գիւղերում վրաց դպրոցներ չը կան....

Վ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գարաբխա, 10 հոկտ.

Ալէքսանդրապօլ քաղաքից մի ժամու չափ հեռու Կահարի գիւղացի 18 տարեկան Մինաս Տէր Բարեղեանը իրանց գիւղացի մի քանի սայլապանների հետ սայլով աղաքարեր տարան Գանձակ վանձառեւի և այն կողմերից ցորեն բերելու: Բայց անա երկու ամից աւելի է որ յիշեալ գիւղի սայլապանները չեն վերագործել և ոչ մի տեղեկութիւն չը կայ: Հեռագրեր խփեցին, այս և այն կողմը նամակներ գրեցին, մարդիկ ուղարկեցին, բայց բոլորը ի դուր, սայլապանները անհետացել են և նրանց ողորմելի գերազատանքը գիւղի ցերեկ սգի և տրտմութեան մէջ են: Վերջացնելով նամակը խնդրում ենք, ո՞վ որ այս մասին մի ամենահասարակ և փոքր տեղեկութիւն ունի, շուտով գրել Մեծ-Ղարաբխիսա հետեալ հասցեով: Վարդէգ Տէր Մեղրեղեղեկեանցին: Մենք այս տեղից հեռագրով կամ նամակով կիմանցնեք ում հարկն է:

Ս. Տէր-Մեղրեղեկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 19 հոկտեմբերի

Մեծապատիւ Ալէքսանդր Ստեփանիչ Անանեանց հասցեց մեզ մի հաղար ինն հարիւր յիսուն ռուբլի, որը նուիրել են ի նպատակ շինութեան Բուրձայիսի հայոց ուսումնարանին հետեալ աղաքատէր անձինքը Տիֆլիս Վառվառայ Վախիկեան թամաշեանցն մի հազար ռուբլի, պարոնայք Թովհանէս Չիթախեանցն երկու հարիւր ռուբլի, Միքայէլ Ալիբեկեանցն երկու հարիւր ռուբլի, ինչպան Եազոն Թուրանեանցն մի հարիւր յիսուն ռուբլի, Ալէքսանդր Մանթաշեանցն երկու հարիւր ռուբլի, և Նսայի ֆիթոյեանցն երկու հարիւր ռուբլի:

Բացի սոցանէ ինն ևս նուիրատու եղան երեկ, մի և նոյն նպատակի համար պարոնայք բժշկապետ Արտէմ Խվանիչ Թովհանեանցն մի հարիւր ռուբլի, բժշկապետ Գէորգ Բաբոյն մի հարիւր ռուբլուսոց տոնակ Թիֆլիսի ազոտակահայ կառնածական բանկի և իշխան Նիկոլայ Արղուժիտալիկն մի հարիւր ռուբլի:

Մատուցանելով մեծապատիւ նուիրատուացն ի դիմաց հայազգի հասարակութեան Բուրձայիսու մեր խորին շնորհակալութիւն, քաղցր է մեզ յուսալ, որ ստանով չի վերջանայ այն ազիւ համակրութիւնն, որ սպասելի է մեր համազգիներէն, որ մեր պատուելի ազգայինք միջոց կընծառեն աւարտումն տալու այն արժանագով ձեռնարկութեանն, որ սկսել է և բաւականին յաջող կերպով էլ յառաջ տարել Բուրձայիսանակ մի բուռն հայ ժողովուրդը:

Գաւթի աւազ քահանայ Եարալեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 հոկտեմբերի

Անցեալ 1878 թիւն սրբազան առաջնորդի և թեմ. տեսչի հրամանով Թիֆլիսի Զվէրգաւան թա-

դուր քան արի ս. Մարիամնան դպրոց: Այդ դպրոց մի քանի երկուսուսորդ քանանաների շնորհով օրինաւոր կերպով կազմակերպուեցաւ:

Առհասարակ այդ դպրոցի բացման նպատակն էր նպատակը չբարձր օրիորդներ կրթութեանը: Հաւանական 30 աշակերտուհիներ ունէր ձրի և տնայն տնական 50 կողմ: Կարծով և մինչև ցայսօր շարունակուած է ուսումը:

Չը երկարացնելով յօդուածս ես կը պահանջ մի ցաւակի լուրը ի զիտութիւն ազգայնացս: Ամսոյս կօթին կիրակի օրը բարձր թէլուի եկեղեցիններում պատարագ լինելով, ես իմ աշակերտուհիներովս գնացի թէլուի հայոց մար կեղեցի: Հոգաբարձու պ. Գրիգոր Սողոմոնեան պատահելով ինձ ասում է, որու ինչ իրաւունքով ես բերում աշակերտուհիացի այցտեղը, ես պատասխանեցի— պ. Սողոմոնեան, հայոց եկեղեցում կարող է մանկ նաև թուրքը, ուր մնաց հայ մանուկները:

Արանից յետոյ ես իմ աշակերտուհիներով մտայ եկեղեցի և մի առանձին տեղ սիւնի մօտ տեղաւորեցի օրիորդներին: Մասնուէ Սողոմոնեանց և հրամայում է մղրուած օրիորդների տակից դուրս քաշել խալիչան, բայց մղրիսն նրանից ազնու գտնուեցաւ չը յարգելով նրա հրամանը: պ. Սողոմոնեանց դուրս է գնում եկեղեցուց և մտնում է գործակալի մօտ եկեղեցուն կից սենեակ, և ասում.— «Մակարեանց օրիորդներին բերել է այստեղ շաբի համար»: Պատարագը դու ևս սկսուած չէր իսկ բազմութիւն հաւաքուած էր: Գործակալ (Գէորգ ա. քահ. Տէր Սարգսեանց) գաւազան ձեռին մտնում է աշակերտուհիացի և երկու ձեռքով բարբարոսաբար հարուածում է և ասում. «Ես ձեր տեղը չէ, այստեղ պիտի կանգնեն Ս. Գայանեան դպրոցի աշակերտուհիները»: Թէև ես դիմադրեցի, բայց ոչինչ չօգնեց, աշակերտուհիներին տիրեց ա՛ն ու սարսափը, և սկսեցին լաց ու աղաղակել: Նրանցից մինը ուշաժամից, իսկ երկուսը կուռը և մէկի ոտը միտակցեց, որովհետև սաստիկ հարուածից մի քանիս պատին կպան և մի քանիս զեպին փռուեցան: Մեր դրութիւնը այն ժամանակ նման էր գառների աղաղակին: Չը նախելով որ այդ երկու դպրոցները ծառայում են մի և նոյն նպատակին, ես չը դիտեմ, պ. խմբագիր, ինչ էր պատճառը այս բարբարոսական վարմունքի: Եթէ հայր գործակալը ունէ ինձ հետ թշնամութիւն կամ անձնական հաշիւ, ինչ մեղաւոր եմ քննեցէ և մատուց օրիորդները: Այս վարմունքը միթէ նման չէ բաշխուածութեան վարմունքի, ինչու հայր գործակալ անցնայից դաս չէ առնում: Մինչև երբ պէտք է շարունակէ իւր բռնակալութիւնը: Այս ցաւակի դէպքի վրա հրաւիրում եմ Վեհափառ կաթողիկոսի հայրական ուղարկութիւնը: Իսկ ձեզ, պ. խմբագիր, խնդրում եմ ձայն բարձրացնել այսպիսի վարմունքի դէմ:

Վարժուհի Եղիարեթի Մակարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ԳՈՒԹԱՅԻՍԻՅ հետեւեալը: «Այստեղ ժամանակ է նորերում օրիորդ Գայանէ Գովհաննիսեան և ներկայ տարիպ արդից արդէն ձեռնարկել է տեղիս հայ ուսումնարանների մէջ իր պարապմունքներին, որպէս ուսուցչուհի և վարժուհի: Որիորդի բարի համարը և յայտնի ազգասիրութիւնը կարող են գրաւական լինել, որ յիշեալ ուսումնարանների վիճակը, նրա անխնայ աշխատասիրութեամբ և ճշակութեամբ տեղիս քահանայի տէր Գալիթ Նարայեանցի, նշմարելի կերպով կը բարեփոխվի: Որիորդի այս տեսակ անձնութիւնը առաջ է դալիս լիկ ազգասիրական ըզրգայունքից և իր համազոր մատուց սերունդին, որի մէջ կարած է մայրենի լեզուի գործածութիւնը, օգուտ բերելու փախադից»:

Մեզ գրում են ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՅ, որ Բեաւարբայի վիճակաւոր առաջնորդ սրբազան Մակարայրեպիսկոպոսը մի ստորագրութիւն է բաց արել յօդուտ «Արարատեան ընկերութեան և ինքը ստորագրել է 3000 ռուբլ: Ասում են, որ մեծ գուժար կը հաւաքվի: Մեզ այս լուր հաղորդողը մի պատահական թղթակից է: Եթէ այդ լուրը ճիշտ է փառք և պատահ նորին սրբաբնութեան, որ հայ ժողովրդից ստացած փողերի մի գնահատ փոքր մասը նուիրում է նոյն ժողովրդի մանուկներ կրթութեան գործին:

Ներկաւոր ճիւղի հոկտեմբերի 15-ին թիֆլիսի ՍՈՒՄ վարժանիցաւ Սողոմոն արքեպիսկոպոսը Հասանաճալալեանը: Պատում են, որ հանդուցեալ թոշիկ է 25000 ռուբլ և կտակել է, որ այդ գումարը բանկերում չահեցնվի 125 տարի և յետոյ արվի

հայոց ուսումնարաններին: Հանդուցեալ սրբազանի տանը միայն 100 ռուբլու կայք են գտել:

Կիրակի, հոկտեմբերի 21-ին հայ թատրոնատերերի խումբը, պ. Յ. Սուզանաճեանի առաջնորդութեամբ, Արծրուտ թատրոնում կը ներկայացնէ «Մէլիքիան կամ Օսման-փաշա», դրամա 4 արարուածով և 6 պատկերով հեղ. Բանի, փոխ. Փարսադանեանի:

Հինգշաբթի, հոկտեմբերի 18-ին թիֆլիսի Ամարային թատրոնում հայ դերասանական մշտական խումբը ներկայացրեց «Կողոպտուած փոստը»: Երկուշաբթի հոկտեմբերի 22-ին նոյն խումբը կը ներկայացնէ «Երկրորդ անգամ» Սէր առանց համարման» դրամա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՅՈՒՆԱՅԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-18

Ասիական Թուրքիոյ բարենորոգմանց գործարկութեան սկզբնաւորութիւն մը կը համարուէր Բոսնիայի ներքին պաշտօնը: Արդ՝ թէպէտ և Կարնոյ և Բերիոյ Բոսնիայի բնակչութիւնը և Սերաստիոյ կուսակալ Ապետին փաշա լաւ հրատարակիչ մ'է, և իւր ամեն գործողութիւնը անմիջապէս ծաղիկաւ ոճով մը լրագրաց էջերը կը հասնին: Ուր կը ծանուցանէր թէ Տիրանակերտի, Մարտինի և Մալաթիոյ մէջ նոր ոստիկանութիւն և Թանտարմանի տարման զօրքը կազմուէր է, ամենն ալ զրոյ կարգացող և պատուաւոր անձերէ: Իրենց նոր զգեստ տրուէր է, և Պայրանի առթիւ բոլոր Վիլայէթին ոստիկաններն ու Թանտարմանի նոր զգեստներ հագած էին: Աղբիւր մէջ նը մանապէս ոստիկանութիւն և Թանտարման կազմուէր է: Գոհութեան արժանի է որ այնչափ պատուաւոր անձեր է գրել կարգալ զիտցող մարդիկ գնումաւ են բարենորոգմանց համեմատ Թանտարման և ոստիկանութիւն կազմուէր: Համար, և յուսալի է որ այսուհետև անոնց վրայ ոչ ևս նոյն գանդաւորները կը լըսուին, որք Ձապթիկներու դէմ ժամանակ ժամանակ կը պատահէին: Կ. Պօլսոյ մէջ անգամ ոստիկանութեան զիտուորները տակաւին ըստ մեծի մասին գրել կարգալ զիտցող անձերէ բազկացած չեն: Բայց Ապետին փաշայի մոգական գաւազանը կերելի որ Սղերդի և Մարտինի կողմերն իսկ զրոյ կարգացող և աստուգ չալ սի յ է թ մարդիկ հասնէր է, որով ոստիկանութեան և Թանտարմանի մասին ոչ միայն Կ. Պօլսէն առաջ անցած կը լինի, այլ և փառաւոր հերքում մը կուտայ Տէպալի այն զիտուորութեան թէ հակառակ Պիքոնիայի տեղիս երաշխաւորութեան «Փղքը Ասիա» բարբարոսութեան խաւարին մէջ ընկղմած է: Ապետին փաշա Բրդաց գլխաւոր բռնաւորներն Ալպանիա արարեց, բայց տակաւին լուր չը կայ թէ արդեօք ասոնք իրենց արարի տեղի հասան են: Մանաւ էջէնտի Մարտինի Միւթէարքը Բուրջուտ պէյն և Մէճիլի անդամները դադրեցուց և Միտիթի Գէլին Օսման Թիմուր ձերբակալել տալով Տիրանակերտ գրիցեց քանի մը շաբաթուան մէջ յիտուտի չափ փնտաակար անձինք ձերբակալուած են Մուշէն մինչև ձեզրէ, որոց մէջ է եղեր Ղարգան փառաշահի կոչուած Հաճի Թէթաշ պէյ, Սուլիվանցի Ապուռլաշ պէյ, Թէլօ պէյ, Սղերդի Համիտ աղա, որ Դէճ գիւղի ջարդերուն հեղինակն է եղեր, և ուրիշներ, որք ամենէն վատ բռնաւորներ էին: Թէթաշ պէյն ապարանքը ժայռի մը գլը լուկ էր, ուրիշ վար կը զրբէր որ և է Բրիտանիայ, որ իւր պահանջած ստակը կամ ուրիշ բաները չէր տար: Մանաւ էջէնտի տասը տարի առաջ Կարնոյ կողմը պաշտօն վարած էր և այն ստեղծ Բերդերը վրանա

նակութեան դադրեցնելով զիտարանակ ժողովուրդը ընկու համար Արի փաշային յիշատակալի մը ներկայած էր, որ հաճութեամբ չէր ընդունուած, բայց եթէ այժմ կարանայ զայն գործադրել՝ հարկաւ իւր համբախ վրայ նոր և տեական փայլ մը կաւելցնէ: քանզի քանի որ Հիմնական միջոց մը ձեռք չառնուի վրանարանութեան վերջ տալու համար, շատ դժուարին է երկրին բարգաւաճութիւնն ապահովել: Փորձով տեսնուած է որ այն բռնաւորներն, որք վայրկեանական նուաստացում մը կրած են բանտարկութեամբ կամ ուրիշ կերպիւ, իրենց վերաբարձէն ետե խաղաղ ժողովրդեան առաւել մեծ պատուհաս մ'երած են: Մանաւ էջէնտի Բարբերդի և Տիրանակերտի մէջ նշանաւոր գործ մը տեսած չէր անձամբ, բայց երբ առանձին զրկուեցաւ Մարտինի կողմն, հոն բաւական գործ տեսեր է, եթէ աւելի անկողմնակալ թղթակիցներ վերջէն ուրիշ կերպ տեղեկութիւն չը տան:

Ապետին փաշա, որ իւր հիւնադէտ երբեմն ալ Կեանքների նմանի կուզէ, Տիրանակերտի մէջ ձառ մը խօսեցաւ, ուր ժողովրդոց կեանքը մարդոց կեանքին հետ կը բաղադատէր, և կրէր թէ ժողովուրդը պէ մարդոց նման հիւանդութեան և առողջութեան վիճակ ունին: Ժողովրդոց հիւանդութիւնն է օրինազանցութիւն և զեղծում, որոց զեղն է պատիժ: Երբ ջերմէ բռնուած հիւանդի մը 24 կուտի չափ Միւթաթ Տը Բինին տալ պէտք լինի, և բժիշկը հիւանդին հաճելի լինելու համար միայն 10 կուտ տայ, հիւանդութիւնը կը ծանրանայ. ուստի Ապետին փաշայ կը յարէ թէ իւր վարչական բժիշկի ազդու և արդար պիտի լինին Բոսնիայի, և Վալիին և Տիրանակերտի և Մամուրէթ-Իւլ-Աղլի (Քարբեղի) ժողովրդեան աշակերտութիւնը կը խնդրէ ազգային վերակազմութեան համար:

Ահաւասիկ ճարտասան ատենախօսութիւններ, ազդու հեռագիրներ և սկզբանց յայտարարութիւններ, որք թէ և կատարելագուց գործարկութեան չը համապատասխանեն, բայց և այնպէս անհուն յառաջդիմութիւն մ'են բարգաւաճումը հին դրութեան, երբ միայն լուրթիւնը կը տիրէր, և զեղծումներն հրապարակային պարսաւ անգամ չէին ընդունիր: Բայց չեմք զետեր թէ ինչու համար Բերիոյ և Կարնոյ Բոսնիայի լուր են, և իրենց գործողութեանց վրա՝ եթէ երբէք ունին ըսու համար մը տալ չեն ուզեր հասարակային կարծեաց:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՅԻՅ

Վան, 1 հոկտեմբերի
Ռուսաց նոր հիւպատոս կամարականի Վան մասերը և ընդունվել մի մեծ և չը տեսնված դեմոստրացիա էր մուսուլմանների վերաբերմամբ. բազմաթիւ ժողովուրդ տեղական առաջնորդի, բուն հոգեւորական զապի, մօտ 25 զանազան ազգային ընկերութիւնների ներկայացուցիչների հետ, նմանապէս բոլոր ուսումնարանների ուսուցիչները իրանց աշակերտների հետ, դիմաւորել էին մօտ 25 վերստ ճանապարհ Վանից դուրս, սպասելով կամարականին վաղ առաւօտից: Վերջապէս երկուսը հեռատանուով քանի նման փոշի մի րեան, որք գուշակել էր տակ թէ կամ սուրհանգակն է մօտիկ, կամ լիքը կամարականը: Նա սուրհանգակն էր, որի ետեից երեաց և մի խումբ տաճիկ զիտուորներ, որոնց առաջ խրինչում էր մի քանիսը արարական սպիտակ ձի, որի վրա նստած էր կամարականը սպիտակ հագուստով: Բանի մօտենում էր նա, ժողովրդի աղբիւրը աւելի էին շարժվում, աւելի զրդվում: Վերջապէս թիւրաց օրը մի կատաղի որոտամբ, որի մէջ լըսվում էր «Եղեցէ» և «Եւուա»: Չը համբերեց ժողովուրդը, վազեց առաջ մի բոսկիւտ աւելի շուտ տեսնելու կամարականի թուլի երեսը և համակրական դէմքը: Նա հանեց իսկոյն ուսական գլուխը և բոլոր ժամանակը սիրալի բարեկեր էր ուղարկում աջ և ձախ: Նրա երեսի վրա պարզ երևում էր

այն հոգեկան յուզումները, որ շարժում էր նրա մէջ իր կարոտալից ազգակիցների խանդաղատանքը:

Բոլոր ժամանակ նրան սեղմում էր խուռն բազմութիւնը, որի մէջ ուսումնարանների աշակերտները առաջին տեղն էին բռնում:

Արշափ ուրախութիւն էր զգում այս մատաղահաս սերունդը, որը մի մեծ տէրութեան հիւպատոսի գալը իր ապագայ աղաւթեան նշանն էր համարում: Բերդերի և տաճիկների դադրվել հայ ազգաբնակչութեան դէմ հասել է իր ծայրայեղ կէտին: Հայոց դրութիւնը վատ վարչութեան շնորհիւ հասել է այն տեղ, որ ժողովրդի փրկութիւնը միայն մանամաղանանալը կը լինի, եթէ մի օր առաջ չը շտապեն օգնութիւն հասցնելու:

Ամեն կողմից կոտորում են, ամեն կողմից հարստահարում, բայց ոչ մի կողմից չը կայ դատ և իրաւունք:

Չէք վեր առնելու վրա ամենին չէ կարող ժողովուրդը մտածել, երբ բոլոր արագած կէտերը գտնվում են միայն բերդերի և տաճիկների ձեռքին, երբ հայոց բնակիւմ տեղերը զետեղված են բայց և անպաշտպան տեղեր, իսկ մուսուլմանները ընդհակառակը: Ով անցել է հէնց մի անգամ կը բուրբ վան, նա հեշտ կարող է համոզվել սրա իսկութեան մէջ, նա հեշտ կարող է գալ այն եզրակացութեան որ հայերի փրկութիւնը գէջով չը կարող լինել, այլ լաւ քաղաքական կազմակերպութեամբ և կուլտուրական մեթաւմամբ, վասն որոյ և հարկաւոր է վրազել դրամական օգնութիւններ ուղարկելու, որոնցով կարելի կը լինի ուսումնարաններ բանալ և ուսումնասիրութեամբ Եւրոպայի համակրութիւնը գրաւել:

ՄԵՍԿԻ ԶԵՆՈՎԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՅ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ «С. Петерб. Вѣдом.» լրագիրը հատուկ ծախսով արգելած է Մինիստր Մակոլ որոշեց զազգայնեցի «Смоленскій Вѣстник» լրագիրը 3 ամիս ժամանակով: «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է այն լուրը, որ թուրքեստանի գեներալ-նահանգապետ կառաքմանը առաջարկեց բարձրագոյն կառավարութեան քննութեանը այն ծրագիրը, որ նա մշակել է մինչև Տալիշնա երկաթուղու դիմ անցկացնելու համար: Ինչպէս լսվում է կառաքմանի առաջարկութիւնը հասնութիւն է գտել պետական բարձր չըմաններում: Ասում են որ Ասիայի քաղաքական անցքերը ստիպեցին կառաքմանին շուտով գնալ իր տեղը, ուր նա կը վերադառնայ լայնարձակ լիազօր իրաւունքներով:

10հոկտեմբերի, 18/31 հոկտեմբերի: Կանդաւորից հաղորդում են «Standart» լրագիրը, որ գեներալ իւզ Կէրաւ—Գլխալ մօտ ցիրուցան արաւ Գիւրգայների զօրքերը: Սասիկ ճակատամարտից յետոյ, անցկացրեց կորցրել 2 սպայավաներ և 78 վիրաւորամաներ: Կարուլի բնակիչները խաղաղ են. բառ երեսութիւն նրանց խաղաղութիւնը պահպանվում է երկրից: Բայց հէնց որ յաղթութեան յոյս կունենան, նրանք խորին նորից սուր կը կանգնեն:

Կ. ՊՈԼԻՍ, 16/29 հոկտեմբերի: Միջախ-փաշայի հրամարականի մասին ներկայացրած խնդրը Սուլթանը չընդունեց. մի քանի լուրեր ասում են, որ խնդրի չընդունելու պատճառն այն էր, որ Սուլթանը լսել էր թէ այդ հրամարականին արգելք է եղել Լէյալը. մի քանի ուրիշ լուրեր էլ հաղորդում են, թէ դրա պատճառն այն է, որ Սուլթանը վախենալով թէ մի գուցէ Միջախ-փաշան պաշտօնից հրաժարուելուց յետոյ, կրկին կը վերադառնայ, և բայի այդ սիրտ չանկող նրան նորից քարոզ ուղարկելու, աւելի լաւ համարեց, չը հրամարկել նրան պաշտօնից, հետու պահել մայրաքաղաքից: Պատում մի քանի նշանաւոր անձինք են կալանաւորել: Կալանաւորվածների թոււմ գտնվում է նոյնպէս և Սուլթանի գլխաւորական փաշայի առաջնորդը, որին կալանակցել են Սուլթանի դէմ կազմված նոր դատաճանութեան մասնակցութեան մէջ:

Կ. ՊՈԼԻՍ, 18/31 հոկտեմբերի: Բ. Գուռը հրամայեց, որ Յուստատանի սահմանադիր արաւանական զօրքերի փոխարէն ասիական զօրքեր գնեն: ՅԵՏԵՆԻՆԻ, 16/31 հոկտեմբերի: Չէրսօգորթը առաջ գնացին մինչև Օրբանեցա: Բնակիչները գնալով Չէրսօգորթն բանակը յայտնեցին իրանց հնազանդութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., երրորդ 93 ռ. 37 1/2 կ., չորրորդ 93 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխաւորութեան տոմսակն արժէ 231 ռ. 75 կ., երկրորդ 225 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխաւորութեան տոմսակն արժէ 90 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 87 1/2 կ., ոսկի 7 ռ. 73 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,50 պէնս: Տրաւմադրութիւնն ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

- ՁԱԲ. ԳՐԻԳՈՐԵԱՆՆԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԳՐԱՎԱՆՔԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՑՆԵՐԻ ՍՈՒՍԿՆԱԿՆԵՐԻ ՍՈՒՍԿՆԱԿՆԵՐԻ
- 1 Սրբանձտեանց-ՔՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 Կ.
 - 2 Ա. Մանդիկեանց ՎԻՍՏՈՒՄ ԶՈՒՄ ԳԵՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 1 ր. —
 - 3 Բժիշկ Ա. Բարայեանց ՈՒՍՈՒՄ ՆԱԿԱՆ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
 - 4 Ա. Բազաթրեանց-ՔԵՐԱՎԱՆ ՆՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ — 25 Կ.
 - 5 Երկաթէ ԳԻՄԱԿՈՎ ՄԱՐԻՉ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԱՐԻ ՀԱՅՈՑ 1 ր. —
 - 6 Յ. Շիշմանեանի-ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄՆ Ա. 1 ր. 15 Կ.
 - 7 Փարոս 1879 — — — 1 ր. —

Չրկինանց Սուրբ Կարապետ Եկեղեցւոյ Հայոց Տփլիսիայ Ներքին ՔԱՀԱՆԱՑ ՏԵՐՐԱՐՍԵՂՆԱՆՑԸ ցաւօք սրտի յայտնելով իր որդի ՎԱՍԻԼԻ ԴՆԱՀԱՆ ԴՆԱՍԻՆ խնդրում է իրան բարեկամներին և ծանօթներին պատվել ներկայ գանձելով յուրաբար կաւորութեան հանդիսին: ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՒ յիշեալ եկեղեցւոյ զաւթում: Թաղումն կը լինի յառաջիկայ երկուշաբթի աւուր 22-ին հոկտեմբերի ներկայ 1879 ամի, Տփլիս:

Կերտաց տարիքը 12-ից մեծ և 7-ից փոքր պիտի չը լինեն: Ընդունելութիւնը տեւ լու է մինչև ներկայ հոկտեմբերի վերջը: 2-3

ԿՈՒԿՐՈՑ ՍՈՒՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ բախում Մեծապատիւ Մ. ՄԻՐՁԱՅԵԱՆՆԻ Հիմնած ՏՂԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԾԻՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ Հոգաբարձութիւնը յայտնում է պատուելի Հայ Հասարակութեան, որ յիշեալ ուսումնարանի համար ԱՇԽԱԿԵՐՏԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ սկսվել է ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ից: Յանկարող կարող են իրանց որդիքը ներկայացնել նոյն ուսումնարանում: Ա. Աստուածածնայ եկեղեցւոյ երեցփոխան պ. Բ. Փիլարեանցին ամենայն օր մինչև առաւօտեան ժամը 9: Աշա-

ՆԱԿՈՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ ԳՐՈՒՋԻՆԱՆՈՒՄ անվաճ քարվանսարան, որ ունի 116 ԳՈՒՔԱՆ, 2 մեծ ՄԱԳԱԶԻՆ պահեստի համար, 2 ԱՌՈՒԱՆՈՑ, 2 ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով և մեծ ԱՌԱՋԱՆ մշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԳԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 բառակուսի սաժէն: Յանկարողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴՆԱՍԻՆ կարող են զիմել Պ. ԲԱՂՎԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՆԻՆ, Թիֆլիսում, Դանովկայայ փողոցի վրայ, ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԷ: 19-20 (2)

ՉԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԵՅԻ ՄԵՔԲԵՇՈՒ ԶԻԹԻՅ, որ պատրաստված է Մօսկվայի զեղազորք:

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի Փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները գրգեցին ինձ պարապել նրանց արդիւնազորութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը զաղանիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻԼՆԱԿԱՆՆԻ (ԳԻԹՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժամ:

Յոյս ունեմ, որ ուսու բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԵՒՄՆԱՆՆԵՆ ԱՐԻԻՆԵՆԿՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՆ:

Ծախելու տեղերը: Ռուսաստանի բոլոր զեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները: Մօսկվայում Լուբանսկի զեղատուն Լա. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեյզեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրիսովի և Բուստոմովի զերատուն:

24-25

- Կենտրոնական Իրավաճառանոցում, Իվորցովայ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում, վաճառվում են հետևեալ նոր գրքերը:
1. Կարմիր լայտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. 50 Կ.
 2. — նոյնը առանց կազմի. 30 Կ.
 3. Թաւանազ մեղու փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. 40 Կ.
 4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Չ. Մանրեանի պատկերազարդ. 30 Կ.
 5. Հակապահան ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Չ. Մանրեանի, պատկերազարդ. 10 Կ.
 6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. 1 — Կ.
 7. Փորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրբանձտեանց. 1 » 25 Կ.
 8. Երկունք իններորդ դարու. զործ Յերենցի. 1 » — Կ.
 9. Պատանեկան ներշնչումներ, զործ. Հրանտ Ասատուրի. — » 60 Կ.
 10. Մի կաթիլ արտոսը, զոր կը հեղու. Սիսակ Հայ միսիրին վրայ. — » 35 Կ.
 11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախոսութիւն Ա. Արծրունու. 1 » — Կ.
 12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բարայեանի. 1 » — Կ.
 13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատինական լեզուի և Ռուսերէնից Հայերէն. բժ. Ա. Տիգրանեանցի. 1 » — Կ.
 14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ա. Մանրեանի. 1 » — Կ.
 15. Հայկական թատրոն. Վառլէր իմ վիշեր, փարս երեք պատկերով զործ. Մ. Տէր Իրիգորեանցի. — » 40 Կ.
 16. Բեքեր բիճու. համարը. Օպերետա մի զործողութեամբ, Թարգ. Ն. Լայպեանցի. — » 25 Կ.
 17. Աշխատանքի երկու գլուխով, փոքրիկ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Նահաբուդեանի. — » 25 Կ.
 18. Բունի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Չ. Մանրեանցի. — » 40 Կ.
 19. Ժամու և Ժանէտ օպերա-փողովի, Թարգ. Գ. Նահաբուդեանցի. — » 40 Կ.
 20. մէկ զործողութեամբ. 20. Պէպօ. կոմեդիա երեք արարուածով, զործ. Գ. Սուրուկեանի. — » 30 Կ.
 21. Պատանեկան խրատ. փողովի մէկ արարուածով Մ. Տէր Իրիգորեանի. — » 50 Կ.
- Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և, օտար լեզուների, դասական պետոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն Ռուսերէն և Պարսերէն վերաբանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտուսերէն և Պարսերէն վերաբանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտուսերէն գրքեր: Օտարալեզուները իրանց պահանջները պետք է ուղարկեն հետևեալ հասցեով՝ «Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю» 1-6

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց		ԹԻՖԼԻՍ 1879	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅՆԱԿԱՆՈՑ (Հոկտեմբերի 19-ին)	Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	ՓՕՍ	ԲՃՇԿԱՆՈՑ
Ոսկին (պուրակներով)	8	15	Բ. Կ.	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրիներ և թէ ծանր փաստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կեսըցից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը: Երկու շաբթի. Լիսիցիկ և Գ. օրակալի ներքին հիւանդանոցներ, Գրաւարանից վերաբանութեան և աչքի վերաբանութեան և աչքի հիւանդանոցի ջրային և հոգեկան հիւանդանոցի:
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—	Կովկասի և Անդրկովկասի բաղադրները. 1	Առուստասանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—	Ռուսաստան 2	Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Վերջինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—	Աւտորիա 3	Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Երկրորդ 5% վերջինի 230 »	230	—	Անգլիա 4	Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Մարտի կուրսը 270 —	100	—	Գերմանիա 2 88	Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Ի ծնողի կուրսը Օղեսայի վրա 9 45	9	45	Ֆրանսիա 3 75	Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Վաճառի կուրսը արծի 121 գր. Գարեթի բարաթը 4 80	100	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Առաւորական բանկի ակցիան 200 մ. 310	310	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Փոթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ. —	—	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Շաբարը բրոնզու 7 30	7	30		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» միւս տեսակը 7 15	7	15		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» շաբար աւաղը 5 30	5	30		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» տրանսպորտ 5 30	5	30		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» մաքուր վճարած 10 —	10	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Բաժնեակը երկուսու Ա. մերկայի սերմից 8 —	8	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Միւս տեսակը հին սերմից 7 40	7	40		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Բոուրը թուշի 7 50	7	50		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» թարազամի 4 —	4	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Աւելուրը Երազալու 2 20	2	20		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» Երանի —	—	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Գարին 1 40	1	40		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Մոմը բնածարսի (creap.) 12 40	12	40		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Մետաքսը Նուսիկայ 180 —	180	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Կախիթ ունը 140 —	140	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Կոկոնը Նուսիկայ (բոմ.) 50 —	50	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Տրիգոնը (լաւ) Ազուկայ 65 —	65	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
Կօֆէն մոկոփ 26 —	26	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» Իւանի 22 —	22	—		Ռուսաստանից և Արատայից փաստը ամեն օր Բաքուի արակալից երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերը հասարակ նամակները մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան:	Երեք շաբթի. Մինիկի վիճակի վերաբանութեան հիւանդանոցի և հոգեկան հիւանդանոցի:
» Մանա խնդ					